# Ստեփանակերտում հայտնաբերվել եւ վնասազերծվել է արկ

Նոյեմբերի 29-ին ԼՂՀ մայրաքաղաքի կենտրոնական` Ազատամարտիկների պողոտայում, հանրապետական հարկային վարչության շենքի դիմաց ճանապարհաշինական աշխատանքներ իրականացնելիս, 1, 5 մետր խորության վրա հայտնաբերվել է ղարաբաղյան պատերազմի ժամանակներից մնացած մի չպայթած արկ: Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեցին ԼՂՀ ԱԳՆ տեղեկատվական-վերլուծական վարչությունից, ԼՂՀ արտակարգ իրավիճակների վարչության եւ հանրապետությունում գործող «Halo Trust» միջազգային ոչ կառավարական կազմակերպության աշխատակիցների համատեղ ջանքերով վտանգավոր գտածոն, որը պարունակում էր 7 կգ տրոտիլ, վնասազերծվել է եւ դուրս բերվել քաղաքից` հետագա ոչնչացման համար: Ինչպես հայտնել են «Halo Trust»-ի գրասենյակում, ռեակտիվ արկը պատկանում է «Գրադ» համազարկային կրակի համակարգին եւ, ենթադրաբար, քաղաքի վրա արձակվել է ադրբեջանա-ղարաբաղյան ռազմաճակատի Աղդամի ուղղությունից: 1992-94 թթ. ադրբեջանական բանակի կողմից այդպիսի արկեր են օգտագործվել Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի հրթիռա-հրետանային զանգվածային գնդակոծումների ժամանակ: Ընթացիկ տարվա սեպտեմբերից ի վեր «Halo Trust»-ի մասնագետները Լեռնային Ղարաբաղում, գլխավորապես հանրապետության Ասկերանի շրջանում, վնասազերծել են շուրջ 1700 չպայթած եւ այլ զինամթերք, այդ թվում` ավիառումբեր: Վնասազերծվել է 3, 5 հազար քառակուսի մետր տարածք: